

ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ռ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վաղ միջնադարյան Հայաստանի վարչական կառուցվածքի հարցերը բազմիցս են քննության նյութ դարձել ուսումնասիրողների կողմից: Բայց, չնայած կատարված աշխատանքին, դեռևս շատ հարցեր նորովի մեկնաբանության կարիք ունեն:

Ներկա աշխատանքի քննության առարկան Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցն է:

Միջնադարյան Հայաստանի վարչական կառուցվածքը, կրելով երկրի պատմաքաղաքական զարգացման ազդեցությունը, գտնվել է անընդհատ փոփոխման և զարգացման ընթացքում:

Երկրի վարչական կառուցվածքը իր զարգացման նոր փուլը մտավ Արշակունիների անկումից հետո՝ Մարզպանության շրջանում, քանի որ ետարշակունյաց ժամանակահատվածը, թեև անմիջականորեն հաջորդել է Արշակունյացին, սակայն էապես տարբերվել է նրանից:

Հայաստանի՝ պարսկական տիրապետության հատվածում վերացնելով Արշակունիների տիրապետությունը՝ պարսից արքունիքը առաջին հերթին իրականացրեց երկրի կառավարման մարզպանական ձևը, որի դեկավարը՝ մարզպանը, անմիջականորեն նշանակվում էր պարսից արքունիքի կողմից: Այս քայլով սկսվեց երկրի պարսկացման քաղաքականության ծրագիրը:

Այդ նպատակով Հայաստանից անջատվեցին նրա սահմանամերձ նահանգներն ու զավառները՝ հօգուտ հարևան թույլ և ավելի հնազանդ երկրների՝ Վիրքի ու Աղվանքի, որով թուլացավ երկրի հզորությունը:

Հաջորդ քայլը թագավորական իշխանության վերականգնման հնարավորության բացառմանն ուղղված միջոցառումներն էին: Պարսից արքունիքն այս նպատակով վերացրեց Արշակունիների տնտեսական հենարանը՝ կտրատելով և մախարարական տիրույթների վերածելով բուն արքունիքի կալվածքը՝ Այրարատ աշխարհի այն տարածքները, որոնք անմիջականորեն պատկանել էին թագավորական ընտանիքին: Այսպես են առաջացել Կոտայք, Վարաժնունիք, Մազազ զավառները, որոնց տարածքը նախկին բուն արքունիքի ոստանն էր: Վարչական այս փոփոխությունները վերջինը չէին: 450-451 թթ. դեպքերը ցույց տվեցին, ինչպես բազմիցս նշում են Եղիշեն և Թովմա Արծրունին, որ թագավորության վերականգնման միտումը դեռ առկա էր հայ մախարարների և անգամ «ուրացող» համարվող Վասակ Սյունու մոտ, և այս միտումը գաղտնիք չէր պարսից արքունիքի համար:

Արշակունիներին զրկելով գահից՝ պարսից արքունիքն իր գեներն ուղղեց հայ մախարարների դեմ: Որպեսզի բացառի նրանց միասնությունը և համատեղ պայքարը, արքունիքը ձեռնամուխ եղավ միջնախարարարական երկպառակությունների խթանմանը: Սա մի ամբողջական քաղաքականություն էր, որը մի կողմից թուլացնում էր խոշոր մախարարների ուժը, մյուս կողմից պարսից արքունիքն իր համար սոցիալական հենարան էր ստեղծում երկրում: Այս քաղաքականության ամենաակնառու արտահայտությունը Վահան Թառնիկոնյանի

կողմից Նվարսակուն առաջ քաշված խաղաղության պայմաններն էին¹:

Նախարարների համատեղ հանդես գալը բացառելու համար պարսից արքունիքը կատարեց երկրի նոր վարչական բաժանում, որի հիմքում ընկած էր ռազմական ուժի գործոնը: Երկիրը բաժանվեց ռազմավարչական միավորների, որի նպատակը նաև երկրի ռազմական ուժի մասնատումն էր:

Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցում պատմագիտության մեջ կան տարակարծություններ, կապված վարչական միավորների թվի և առաջացման ժամանակի հետ:

Ն. Ադոնցի կարծիքով վարչական միավորների թիվը եղել է երեքը և դրանք առաջացել են Հայաստանի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, 591 թ. բաժանման հետևանքով²: Այսինքն՝ 591 թվականի բաժանման սահմանագիծը կամայականորեն է տարվել Բյուզանդիայի և Պարսկաստանի կողմից: Մի բան, որը մեր կողմից ընդունելի չէ: Ինչպես 387 թ. (երբ սահմանագիծը տարվեց՝ հիմք ունենալով երկրի ներքին աշխարհաբաժան սահմանները), այնպես էլ 591 թ. բաժանման սահմանագիծը տարվել է հիմք ընդունելով երկրում առկա ներքին վարչական կառուցվածքը: Հակառակը պնդել, նշանակում է ընդունել, որ 428 թ. մինչև 591 թ. Պարսից արքունիքն իրեն ենթակա տարածքներում վարչական ոչ մի փոփոխություն չի կատարել, այլ սպասել է արտաքին ազդակներին: Նկատենք նաև, որ 591 թ. բաժանման նման սահմանագիծն առաջարկել է ոչ թե Մորիկը, այլ Խոսրովը³:

Հետևաբար կարծում ենք, որ Ն. Ադոնցի այն պնդումը, թե «Ամբողջ Պարսկական Հայաստանը մինչև 591 թ. տանուտերական էր և այդպես էր կոչվում» և «Վասպուրական էր կոչվում պարսիկների ձեռքում մնացած Հայաստանը»⁴, համոզիչ չէ:

Ետարշակունյաց շրջանի Հայաստանի պարսկական հատվածում տեղի ունեցած վարչական փոփոխությունների մասին բավականին պարզորոշ վկայում են ժամանակի հայկական պատմական աղբյուրները: Եղիշեի աշխատության քննությունն արդեն ցույց է տալիս, որ Ավարայրի ճակատամարտի նախօրեին երկիրը բաժանված էր նոր վարչական միավորների, որոնք ներկայացնում էին որոշակի անձինք:

Առաջինը Վասակ Սյունին էր, որը երկրի մարզպանն էր, բայց նրա ռազմական իրավասությունները տարածվում էին միայն Սյունյաց գորքի վրա: Ասվածի պարզ վկայությունն է այն, որ Անգոլի դեպքերի ժամանակ մոզպետին օգնելու համար նա անմիջապես գորք է հանել միայն Սյունյաց աշխարհից⁵:

Երկրորդ անձը, որը ռազմական իրավասություններ ուներ, Վարդան Մամիկոնյանն էր: Նա թեև Հայոց սպարապետն էր, բայց իրավասու էր գորքի միայն մի մասի նկատմամբ:

Երրորդ անձը Ներշապուհ Ռմբոսյանն էր, որի ռազմական իրավունքներն ու պարտավորությունները ուղղված էին երկրի հարավի պաշտպանությանը: Այսինքն՝ կային երեք խոշոր դեմքեր, որոնք գտնվել են ժամանակի իրադարձությունների կենտրոնում:

¹ Տե՛ս «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնեան», Եր., 1982, 26 (այսուհետև հղումները կտրվեն տեքստում՝ նշելով ՂՓ և համապատասխան գլուխը):

² Տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 262:

³ Տե՛ս «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 1979, ԺԱ (այսուհետև հղումները կտրվեն տեքստում՝ նշելով Ս և համապատասխան գլուխը):

⁴ Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 262:

⁵ Տե՛ս Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989, էջ 126 (այսուհետև հղումները կտրվեն տեքստում՝ նշելով Ե և համապատասխան էջը):

Նրանք միայն խոշոր նախարարներ չէին, մանավանդ, ըստ Գահնամակի՝ ավագության կարգով, II-ը Ասպետունին էր և IV-ը՝ Մաղխագունին (որոնք ժամանակի իրադարձություններում աչքի ընկնող տեղ չեն զբաղեցրել), մինչդեռ Արծրունին III-ն էր, իսկ Մամիկոնյանը՝ V-ը:

Որ վերոնշյալ երեք անձինք եղել են ժամանակի ազդեցիկ դեմքերը, վկայում է նաև Թեոդոս կայսերն ուղարկված նամակը, որտեղ մեծամեծ նախարարներից հիշատակվում է միայն նրանց անունը՝ « ... Վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսեան հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարօքս ... » (Ե, 142):

Երեք թիվը, դարձյալ նույն անձանց մասնակցությամբ, պահպանվում է նաև ապստամբների մմբողջ գորքը երեք մասի բաժանելու ժամանակ (Ե, 148), երբ այդ անձանցից յուրաքանչյուրը դեկավարում է երեք զորաջոկատներից մեկը:

Երեքի՝ պատահական թիվ չլինելը նկատվում է նաև հետևյալ դեպքում. երբ Վասակն իր գնդով օգնում է մոզերին և պաշտպան կանգնում նրանց, ուխտի մասնակիցները «**հնարագետ իմաստութեամբ** ընդ երկուս բաժանեցին զբանակն» (Ե, 128): Այսինքն՝ մեկը Վասակինն էր, իսկ մյուս երկուսը՝ ուխտի մասնակիցներինը՝ Վարդանինն ու Ներշապուհ Ռմբոսյանինը:

Ինչպես տեսնում ենք, ըստ Եղիշեի ունենք պետական - ռազմական երեք գործիչ, որոնք աշխարհագրորեն ներկայացնում են Հայաստանի երեք շրջանները՝ հյուսիս-արևմտյանը, որը Սեբեոսը հիշատակում է որպես «աշխարհն Տանուտերական իշխանութեանն» (Ս, ԺԱ) և «տունն Տանուտերական», արևելյանը, որը Սյունիքն է, և հարավայինը՝ «Վասպուրական գնդի» (Ս, ԺԲ) երկիրը:

Հետևաբար, Եղիշեն, որն իր նկարագրած դեպքերի ականատեսն է, վկայում է Հայաստանում առկա մոր՝ թագավորական շրջանից տարբեր, երբ երկիրն, ըստ «Աշխարհացոյցի», բաժանված էր 15 աշխարհների, վարչական միավորների գոյության մասին:

Նոր վարչական բաժանման պատկերն առկա է նաև Ղազար Փարպեցու աշխատության մեջ: Հեղինակը որպես «տերութիւն» է հիշատակում Սյունիքը (ՂՓ, ԿԸ), որի «ուրացող անօրէն» (ՂՓ, ՀԸ) «գտէրն Սիւնեաց զԳղիհոն առ նմա ամենայն գաւառին Սիւնեաց գնդաւ ... » (ՂՓ, Զ) հանդես է գալիս որպես պարսական զորքի անբաժանելի մաս: Այսինքն՝ պետք է նկատել, որ Սյունիքը տերություն է, նրա տերը ներկայացնում է ամբողջ աշխարհի զինված ուժը և հանդես է գալիս որպես ինքնուրույն վարչական միավորի ներկայացուցիչ:

Սյունիքի վարչական ինքուրույնության վկայությունն է նաև այն փաստը, որ Ներսեսհայտի ճակատամարտում Սյունյաց զորքը հիշատակվում է որպես պարսիկների, կատիշների զորքին հավասարագոր մի ուժ հայերի դեմ: Այլապես հեղինակը չէր գրի, թե «Ձնշանն հօգօրագոյն արանց, զոր յառաջագոյն տեղեակ ենք զաւրացն Պարսկաց և զԿատշաց և զգնդին Սիւնեաց ... » (ՂՓ, ՀԱ):

Ինքնուրույն վարչական միավոր էր ոչ միայն Սյունիքը, այլ երկրի հարավը միավորող Վասպուրականը: Այս առումով նկատենք մի հանգամանք: Ապստամբության սկզբում Վահան Մամիկոնյանը, շարժմանը համահայկական բնույթ տալու համար (նշենք, որ Բաբկեն Սյունին Վահանի կողմում էր և ճանաչվել էր «իշխան տերութեանն Սիւնեաց» - ՂՓ, ԿԸ), հատուկ մարդիկ է ուղարկում նամակներով «Արծրունյաց ականավոր ազգի», Անձևացեաց, Մոկաց և Ռշտունեաց նախարարների մոտ, նրանց իր կողմը գրավելու համար (ՂՓ, Հ): Իսկ Վահանը այդպես է վարվում, այսինքն՝ մարդիկ է ուղարկում, նաև առանձին պետություններ ներկայացնող հույների և վրաց Վախթանգ թագավորի մոտ: Հանգամանք, որը ցույց է տալիս, որ երկրի հարավը ներկայացնող չորս նախարարական տոհմերը, որոնցից Արծրունիներն ականավոր են, ոչ միայն ռազմական ուժ են ներկա-

յացնում, այլ վարչական միավորի հասնող ինքնուրույն իշխանություն ունեն:

Ղազար Փարպեցու մոտ հիշատակվում է նաև Մարդպետական գունդը, որտեղից էր Պակոճը: Սակայն Մարդպետական գունդը, որը ռազմական միավոր էր, չենք նույնացնում ողջ Վասպուրական երկրամասի հետ, ոչ միայն անվան սահմանափակության, այլև այն պատճառով, որ ապստամբության սկզբում Վահան Մամիկոնյանը նամակներ է ուղարկում այդ երկրամասի չորս նախարարների, որոնք ռազմական ուժ էին ներկայացնում: Իսկ «զՊակոճ ի Մարդպետական զնդէն» (ՂՓ, Ղ) արտահայտությունից կարելի է հասկանալ, որ Պակոճը, որը տոհմանուն չունի, կարող էր լինել սեպուհի և Վահանի կողմնակիցների թվում գտնվել կամ անհատապես, կամ որոշ ջոկատի հետ:

Պետք է կարծել, որ երկրի հարավային երկրամասի կառավարիչ-նախարարը այս ժամանակ ևս պետք է լինեին Արծրունիները: Սա բացատրվում է ոչ միայն Ղազար Փարպեցու՝ Արծրունյաց տոհմին տրվող բնութագրումներով, ինչպես նշվեց վերը, այլև հետևյալ համգամանքով: Նվարսակի հաշտությունից հետո Վահան Մամիկոնյանը, կրկին տիրելով «փ գառու տերութեանն Մամիկոնեից» (ՂՓ, ՂԶ), նույն պատիվն է խնդրում նաև Կամսարականների և Արծրունիների համար: Պարսից Վաղարշ թագավորը, համաձայնվելով Կամսարականների հարցում, Արծրունիների համար մերժում է, պատճառաբանելով, թե «... թող վայր մի, զի գիտասցեն մարդիկն թէ որ ի տոհմէն են ... » և թող նրանք արքունիքին ցույց տան որևէ արժանավոր ծառայություն կամ որևէ վաստակ ունենան (ՂՓ, ՂԶ): Այսինքն՝ Արծրունիները Պերոզի օրոք, որը հայտնի էր իր կամայականություններով և անօրենություններով, զրկվել էին իրենց տոհմական իրավունքներից և միացել ապրստամբությանը, դրանք վերականգնելու հույսով, իսկ Վաղարշը, որը փոխզիջման և խաղաղեցման քաղաքականություն էր վարում Հայաստանում, համաձայնվել է միայն համապատասխան ծառայության դեպքում:

Այսինքն, ինչպես Եղիշեի, այնպես էլ Ղազար Փարպեցու վկայությամբ, ժամանակի՝ երկրի ռազմաքաղաքական կյանքին տոն տվող ուժերն էին Մամիկոնյանները, Սյունիները և Արծրունիները, որոնք ներկայացնում էին Հայաստանի պարսկական մասի այն երկրամասերը, որոնք Սեբեոսի մոտ կոչվում են «աշխարհն Տանուտերական իշխանութեանն» (Ս, ԺԱ), Սյունիք և «կողմն Վասպուրական զնդին» (Ս, ԺԲ):

Մինչև 591 թ. երկրում առկա վարչական բաժանման ապացույցն է այն փաստը, որ նախքան 571 թ. ապստամբությունը, Սյունիքը դուրս էր եկել Հայաստանի մարզպանության կազմից և մտել Ատրպատականի շահրմարի (վարչական միավոր) կազմի մեջ (Ս, Ը), մի բան, որը հնարավոր էր միայն Սյունիքի՝ մինչ այդ առանձին վարչական միավոր լինելու դեպքում: Իսկ սա իր հերթին վկայում է նաև այլ վարչական միավորների գոյությունը երկրում:

Ինչպես տեսանք, մինչ 591 թ. պատմաքաղաքական դեպքերը, Հայաստանում Պարսից արքունիքի կողմից իրականացվել էր նոր վարչական բաժանում:

Այժմ քննության առնենք մարզպանական Հայաստանի վարչական բաժանումների թվի հարցը: Պատմագիտության մեջ ընդունված է երեքը՝ Տանուտերական աշխարհ, Վասպուրական մարդպետական կամ Սեպիական զնդի երկիր և Սյունիք⁶: Բայց աղբյուրները վկայում են ևս մեկ վարչական միավորի գոյության մասին: Դա Այրարատն է: Չմայած անվանական նույնությանը, տարածքային առումով այն չպետք է նույնացնել «Աշխարհացոյցի» Այրարատի հետ, որն ուներ

⁶ Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1983, հ. 3, էջ 110-139:

16 գավառ: Մարզպանության շրջանում՝ Արշակունիների անկումից հետո, այս վարչական միավորը ավելի կրճատվելով, սահմանափակվում էր նախկին Այրարատ աշխարհի միայն արևելյան գավառների տարածքով, իսկ 591 թ. ընդգրկում էր այն գավառները կամ տարածքը, որը բաժանման սահմանագիծն անցկացնելիս պետք է մնար Պարսից ենթակայության տակ, քանի որ Խոսրովը Մորիկին խոստանում էր «... յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք ...» (Մ, ԺԱ):

Այրարատը չի մտել նաև «Վասպուրական գնդի երկրի» մեջ, ինչպես կարծում է Ն.Աղոնցը: Սերեոսը որոշակիորեն տարբերություն է տեսնում Այրարատի և Սեպհական գնդի երկրի (որը Վասպուրական գնդի երկիրն է) միջև: Նա պարզորոշ գրում է, որ արշավելով Ատրպատականի կողմից, արաբներն իրենց զորքը բաժանեցին երեք մասի՝ «Առաջ մի Այրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանս և առաջ մի յԱղուանս» (Մ, ԽԴ):

Այրարատն իր տարածքով ամենափոքրն էր և սահմանակից էր վերոհիշյալ երեք երկրամասերին: Նրա վարչական կենտրոնը Դվինն էր, որը մարզպանի նստավայրն էր և գտնվում էր նրա անմիջական կառավարման ներքո: Այս վարչական միավորն ուներ իր առանձին ռազմական ուժը՝ այրուծին, որը Ղազար Փարպեցին անվանում է «բնիկ այրուծի» (ՂՓ, Զ) և որը գտնվում էր Հայոց սպարապետի ենթակայության ներքո: Ասվածի վկայությունը հետևյալն է՝ Նիխորը Նվարսակում Վահանից խնդրեց «զբնիկ Հայոց այրուծին» ուղարկել արքունիք: Այս ռազմական միավորի մեջ չէր կարող մտնել Սյունյաց «այրընտիր» այրուծին (ՂՓ, ԶԶ), քանի որ այն Սյունյաց տեր Գղիհոնի ղեկավարությամբ գտնվում էր պարսից բանակի կազմում: Մյուս ռազմական միավորը «Մարդպետական գունդն էր» (ՂՓ, Դ), որը ներկայացնում էր Վասպուրականը: «Քնիկ Հայոց այրուծի» չէին կարող կոչվել նաև Տանուտերական աշխարհի առանձին նախարարների զորաջոկատները: Հետևաբար «բնիկ» կոչվող այրուծին պետք է լիներ Այրարատից հավաքագրված այրուծին կամ նախկին արքունի թիկնազորը, որի թիվը, կարծում ենք, պետք է լիներ 2000: Այս մասին է վկայում Սերեոսի այն տեղեկությունը, որ տանուտեր նշանակված Սմբատ Բագրատունի Խոսրով Շումի հետ էին Հայոց նախարարներն իրենց գնդերով և դրոշներով «Եւ զաւրք նորա իբրև երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն» (Մ, ԻԸ):

Այրարատ երկրամասի հարկերը գտնվում էին երկրի պարսիկ մարզպանների անմիջական իրավասության տակ և օգտագործվում էին նրանց և նրանց ընտանիքների կարիքները հոգալու համար: Այս մասին անուղղակիորեն վկայում է Ղազար Փարպեցին, երբ նշում է, որ Վահանին Հայոց մարզպան նշանակելու պատճառներից մեկն էլ այն էր, որ պարսիկ մարզպանների և նրանց ընտանիքների ծախսերը Հայաստանում մեծ են և դա կարելի է վերացնել, եթե մարզպան դառնա Վահանը, որի ընտանիքի կարիքները չեն բավարարվելու պետական հարկերի հաշվին (ՂՓ, ԴԸ):

Այսպիսով, քննության առնելով Մարզպանական Հայաստանի վարչական կառուցվածքի հարցը, եզրակացնում ենք.

որ Արշակունիների արքայատոհմի վերացումից հետո Պարսից արքունիքը երկրում անց է կացրել վարչական փոփոխություններ,

որ վարչական բաժանումների հետևանքով առաջացել են ռազմավարչական միավորներ, որոնց ստեղծման նպատակը երկրի և՛ ռազմական, և՛ քաղաքական մասնատումն էր,

որ Մարզպանական Հայաստանի վարչական միավորներն են եղել Տանուտերական աշխարհը, Այրարատը, Սյունիքն ու Վասպուրական գնդի երկիրը, ո-

րոնք իրենց հերթին բաժանվել են ավելի փոքր միավորների՝ նախարարական տիրույթների:

Р. В. АРУТЮНЯН - К вопросу административного деления Марзпанской Армении. - История Марзпанской Армении была и остается одним из предметов изучения арменистики. Настоящая работа посвящена административному делению Марзпанского периода истории средневековой Армении. Изучая административную структуру того времени, автор приходит к следующим выводам: что после падения династии Аршакидов Персия в своей части Армении провела административные реформы, которые имели военно-политический характер; что в результате этих изменений в Персидской Армении были созданы военно-административные области, целью которых было военно-политическое ослабление страны; что этих областей было четыре - область Танутеров, Страна Васпураканского полка, Сюник и Айрарат.